

# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԷՐ


28.03.2016 18:50



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի պատվիրակությունը Արա Զոհրաբյանի գլխավորությամբ «Իրազեկ բանակ» ծրագրի շրջանակներում երկօրյա աշխատանքային այցով գտնվում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Մարտի 25-ին փաստաբաններին ընդունել է ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը: Նախագահի հետ հանդիպմանն արժարծվել են Արցախի և Հայաստանի համապատասխան կառույցների փոխգործակցությանն առնչվող հարցեր: Նախագահը նշել է համագործակցության օգտակարությունն ու պահանջվածությունը իրենց հանրապետության համար: Այցի շրջանակներում պատվիրակությունն այցելել է նոր շենք տեղափոխված Արցախի փաստաբանների պալատի գործընկերներին: Համատեղ շրջայցի ընթացքում գործընկերները քննարկել են իրականացվելիք համատեղ ծրագրերը՝ մասնավորապես անդրադառնալով Հայաստանի փաստաբանների պալատի կողմից առաջիկայում տրամադրվելիք մասնագիտական աջակցության մանրամասներին: Հստակեցվել է նաև փոխադարձ հանձնառությունների շրջանակներում Արցախի փաստաբանների հետագա կատարելագործմանն ուղղված գործողությունների հաջորդականությունը:

Փաստաբանների պալատի պատվիրակության հաջորդ հանգրվանը գորամասերից մեկն էր, որտեղ «Գիրք զինվորին» նախաձեռնության շրջանակներում հավաքագրված 884 գիրքը նվիրվել է զինժառանգողներին: Պատվիրակության անդամները ծանոթացել են զինվորների առօրյային, զրուցել զինվորների հետ: Ինտերակտիվ դասախոսության շրջանակներում Պալատի ներկայացուցիչները ներկայացրել են մարդու իրավունքների պաշտպանությանը, արժանապատվությանը և իրավական երկրի օրինապահ քաղաքացի լինելուն վերաբերող խնդիրներ, պատասխանել են զինվորների հարցերին: Պատվիրակությունը եղել է նաև առաջնագծում:

Մարտի 26-ին պատվիրակության ղեկավար Արա Զոհրաբյանի գլխավորությամբ ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները վարպետության դաս են անցկացրել Արցախի պետական համալսարանի ուսանողների համար: Դասին ներկա է եղել նաև համալսարանի ռեկտորը և պրոֆեսորադասախոսական կազմը: Ուսանողները հետաքրքրվել են փաստաբանի մասնագիտական գործունեությանը վերաբերող հարցերով:







## Առաջարկվող նորություններ



**14.07.2014**ԱՐԱ  
ՁՈՂՐԱՔՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է  
ԼՂՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ  
ՊԱԼԱՏԻ ՆՈՐԸՆՏԻՐ  
ՆԱԽԱԳԱՀԻՆ



**18.03.2016**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ  
ՊԱԼԱՏԸ ԱՐՑԱԽՈՒՄ  
ԾԱՌԱՅՈՂ  
ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ Է  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



**25.03.2016**ԱՐՑԱԽ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է  
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ  
ՊԱԼԱՏԻ  
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ,  
Artsakhtv.am



**26.03.2016**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ  
ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ  
ԱՐՑԱԽՑԻ  
ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ,  
Artsakhtv.am

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })